

Եվրոպական պաշտպանական ընկերակցության ճախողման պատմաիրավական պատճառները

Խուդոյան Գ. Մ.

*ՀՀ ոստիկանության ՄՀՎ ԱՊՀ երկրների հետ համագործակցության բաժին,
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետության և իրավունքի տեսության և
սահմանադրական իրավունքի ամբիոն /Հայաստան, Երևան/
khudoyan@police.am*

Վճռորոշ բառեր՝ անդրազգություն, միջպետականություն, Եվրոպական պաշտպանական ընկերակցություն, Եվրոպական քաղաքական ընկերակցություն, Արդիականացված Բրյուսելյան պայմանագիր, Արեվմտաեվրոպական միություն, ՆԱՏՕ

Историко-правовые причины провала Европейского Оборонного Сообщества

Худоян Г. М.

*Отдел по сотрудничеству со странами СНГ управления международного сотрудничества
Штаба Полиции Республики Армения,
кафедра теории государства и права и конституционного права
Образовательного комплекса полиции Республики Армения (Армения, Ереван),
khudoyan@police.am*

Резюме: В научной статье рассматривается вопрос создания и деятельности Европейского Оборонного Сообщества и Западноевропейского Союза, а также соотношение и конкуренция этих структур, как наднационального и межправительственного правового регулятора. В работе проанализированы правовые акты, регулирующие сферу общей системы обороны интегрирующейся Европы середины 20 века. На основе анализа материала, автором выдвигаются подходы и излагаются мнения относительно наднационального и межправительственного правового регулирования в сфере Европейской системы обороны, а также относительно причин несостоятельности предложенного проекта договора Европейского Оборонного Сообщества и её политической составляющей - Проекта Европейского политического сообщества.

Ключевые слова: наднациональность, межправительственность, Европейское Оборонное Сообщество, Европейское политическое сообщество, Модифицированный Брюссельский договор, Западноевропейский Союз, НАТО.

Historical Legal Reasons of Failure of European Defense Community

Khudoyan G. M.

*The CIS Cooperation Division of International Cooperation Department
of the Headquarters of Police of the Republic of Armenia,
Department of Theory of State and Law and Constitutional Law of
Educational Complex of Police of the Republic of Armenia (Armenia, Yerevan)
khudoyan@police.am*

Abstract: The formation and operation of European Defense Community and Western European Union, as well as the correlation and competition between them as supranational and intergovernmental legal bodies have been discussed in the scientific article. The legal documents regulating the sphere of defense system of integrating Europe of mid-twentieth century have been analyzed also. Based on the studied data, the author has put forward approaches and opinions related to the supranational and intergovernmental legal regulation of European defense system, as well as the reasons of failure of proposed draft treaty of European Defense Community and its political component- project of European Political Community.

Keywords: supranationality, intergovernmentalism, European Defense Community, European Political Community, Modified Brussels Treaty, Western European Union, NATO.

20-րդ դարի երկրորդ կեսը հանդիսացավ մի ժամանակահատված, երբ ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը ամրապնդեց եվրոպական երկրների ձգտումը ինտեգրվելու և համախմբվելու ընդհանուր զինված ուժեր ունենալու գաղափարի շուրջ: Տարածաշրջանի ռազմական ինտեգրացիոն գործընթացներին ազդակ հանդիսացավ Խորհրդային ագրեսիայի սպառնալիքը¹ և Եվրոպայում ԱՄՆ լիդերության ձգտումը: Այս համատեքստում, խնդրո առարկա հանդիսացավ ոչ միանշանակ մոտեցումը միացյալ Եվրոպական ուժերի ձևավորման և կառավարման՝ վերաբեռնական կամ միջկառավարական², մոդելի ընտրության հարցում: Ի վերջո, վերաբեռնական ոլորտը թողնելով տնտեսական ինտեգրման հարթակին³, իսկ ռազմականը՝ միջկառավարականին⁴: Այսպիսի ընտրության իրավական և քաղաքական նախապատվությունը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել ժամանակին կատարվող գործընթացների տրամաբանական զարգացումները՝ տալով համապատասխան իրավական գնահատականներ:

1950թ.-ին Ռոբերտ Շումանի⁵ առաջարկած պլանի⁶ ետևում կանգնած Ֆրանսիայի Ազգային պլանավորման խորհրդի գլխավոր հանձնակատար ժան Մոնեն ձգտում էր կազմակերպել Եվրոպական պաշտպանությունը վերաբեռնական հենքի վրա, որը համադրելի էր Շումանի առաջարկին⁷: Միևնույն ժամանակ,

ԱՄՆ-ն իր դաշնակիցներին խնդրել էր նախագծել Արևմտյան Գերմանիայի վերազինումը, ինչի կապակցությամբ Ժ. Մոնեն, գիտակցելով Եվրոպական աճի և պողպատի ընկերակցության (այսուհետ՝ ԱՊԵԸ)⁸ բանակցային գործընթացում Արևմտյան Գերմանիայի դերակատարման կարևորությունը և չցանկանալով թույլ տալու նրա դիրքի ամրապնդումը, միաժամանակ, պայմանագրի կնքումից հրաժարվելու հնարավորությունը, իր առաջարկն ուղղեց Ֆրանսիայի վարչապետ, նախկին պաշտպանության նախարար Ռենե Պլեվենին⁹, որն էլ իր հերթին այն ներկայացրեց կառավարությանը, մինչև Ֆրանսիայի Ազգային Վեհաժողով 1950 թ.-ի հոկտեմբերի 24-ին ուղարկելը: Պլեվենը առաջարկեց, որ ԱՊԵԸ պայմանագրի ստորագրումից հետո ստեղծվի Եվրոպական բանակ գերմանական ստորաբաժանումների հետագա ներգրավմամբ՝ միասնական եվրոպական ռազմա-քաղաքական ղեկավարման ներքո¹⁰:

Անվտանգության քաղաքականության այսպիսի գաղափարի տրամաբանական շարունակություն հանդիսացավ Եվրոպական Պաշտպանական Ընկերակցության (այսուհետ՝ ԵՊԸ) ձևավորումը¹¹: 1952 թ. Մայիսի 30-

Institution Press 2010), p. 14; Տե՛ս նաև Catherine Gegout / European Foreign and Security Policy, States, Power, Institutions, and American Hegemony (University of Toronto Press 2010), էջ 5:

⁸ Տե՛ս https://www.cvce.eu/content/publication/1997/10/13/11a21305-941e-49d7-a171-ed5be548cd58/publishable_en.pdf (31.03.2018 թ., ժամը 15:20);

⁹ Տե՛ս <https://www.britannica.com/biography/Rene-Pleven#ref73203> (22.02.2018 թ., ժամը 11:20);

¹⁰ Տե՛ս <https://www.cvce.eu/en/education/unit-content/unit/02bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/7da094ef-0718-4bba-b54a-4e218856f4cb> Տե՛ս նաև https://www.cvce.eu/content/publication/1997/10/13/4a3f4499-daf1-44c1-b313-212b31cad878/publishable_en.pdf (03.04.2018 թ., ժամը 11:10); Divided we stand: The French and Italian political parties and the rearmament of West Germany, 1949-1955, by Linda Risso (Cambridge Scholars Publishing 2007) pp. 40-66; Catherine Gegout նշվ. աշխ., էջ 6; The Foreign Policy of the European Union: Assessing Europe's Role in the World / eds. Federiga Bindi (Brooking Institution Press 2010), p. 13;

¹¹ Տե՛ս Panos Koutrakos / Trade, Foreign Policy and Defence in EU Constitutional Law (Hart publishing Oxford and Portland, 2001), էջ 9, տե՛ս նաև Linda Risso նշվ. աշխ., էջեր 91-185; Emmanuel Konde, Pierre Mendès France, French Security Politics, and the European Defense Community (Open Journal of Political Science 2013. Vol.3, No.1) էջ 27; Foreign and Security Policy in the European Union Edited by Kjell A. Eliassen (SAGE Publications London 1998), p.3; <https://www.britannica.com/topic/European-Defense-Community> (22.02.2018 թ., ժամը 11:20):

¹ Տե՛ս <http://www.rumvi.com/products/ebook/%D0%B5%D0%B2%D1%80%D0%BE%D0%BF%D0%B5%D0%B9%D1%81%D0%BA%D0%BE%D0%B5-%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%BE/bce2bf61-1df7-4bc2-8963-568a00ba68a8/preview/preview.html>

² Տե՛ս Legal competition on different levels: Supranationalism or Intergovernmentalism? Khudoyan G. M. (Регион и мир, 2018, № 1,) pp. 97-102.:

³ Տե՛ս http://europa.eu/ecsc/results/index_en.htm; Տե՛ս նաև https://www.cvce.eu/content/publication/1997/10/13/11a21305-941e-49d7-a171-ed5be548cd58/publishable_en.pdf; <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=LEGISSUM%3Axy0023> (31.03.2018 թ., ժամը 11:20):

⁴ Տե՛ս https://europa.eu/european-union/sites/europaefu/files/docs/body/treaty_on_european_union_en.pdf (03.04.2018 թ., ժամը 12:45):

⁵ Ռոբերտ Շումանը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար էր և ակնավոր քաղաքական գործիչ: Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Robert_Schuman (22.03.2018 թ., ժամը 11:20):

⁶ Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Schuman_Declaration (22.03.2018 թ., ժամը 11:30):

⁷ Տե՛ս The Foreign Policy of the European Union: Assessing Europe's Role in the World / eds. Federiga Bindi (Brooking

ին ԵՊԸ հիմնադրելու մասին պայմանագրի նախագիծը ստորագրելուց հետո, Եվրոպայի Խորհրդի Խորհրդատվական Վեհաժողովը դիմեց վեց հիմնադիր երկրների կառավարություններին փոխանցելու ԱՊԵԸ Ընդհանուր Վեհաժողովին, որը պետք է դառնար ապագա ԵՊԸ Վեհաժողով՝ Եվրոպական Քաղաքական Ընկերակցության (այսուհետ՝ ԵՔԸ) պլանի նախապատրաստման պատասխանատվությունը¹²: Ավելին, երբ Խորհրդարանական Վեհաժողովին միացան ևս ինը պատգամավորներ՝ այն անվանվեց «Ad Hoc Assambly»¹³ և Սահմանադրական հանձնաժողովը, որը ղեկավարում էր Գերմանիայի պատվիրակ Հենրիխ Ֆոն Բորենտանոն, անմիջապես նշանակվեց Վեհաժողովում¹⁴՝ որպես ղեկավար: ԵՔԸ հիմնադրելու առաջարկը ենթադրում էր միասնական մարմնի վերահսկողության ներքո Եվրոպական բանակի ստեղծում, որը հաշվետու կլիներ Եվրոպական Վեհաժողովին: Այս պրոյեկտը՝ առավելապես վերաբերական¹⁵ իր բնույթով՝ մերժվեց Ֆրանսիայի պառլամենտի կողմից¹⁶ 1954 թ. օգոստոսին¹⁷: Հակված եմ

այն մոտեցմանը, որ ԵՊԸ ձախողման հիմնական պատճառներից էր նրա վերաբերական բնույթը¹⁸:

Այդուհանդերձ, ԵՊԸ-ի ձախողումը չդադարեցրեց եվրոպական պաշտպանական ինտեգրման գործընթացը, այլ վերաուղղեց այն այլընտրանքային միջկառավարական մոդելի վրա, թողնելով վերաբերական համագործակցության շրջանակը տնտեսական ինտեգրմանը¹⁹:

ԵՊԸ նախագիծը բաղկացած էր բուն Պայմանագրից՝ պրեամբուլա և 132 հոդվածներ²⁰,

Համաձայնագրի՝ Ֆուլշեյի պլանը հիմնվում էր Միության հիմնադրման միջկառավարական հայեցակարգի վրա:

¹² Գրեթե միաձայն 1953 թ.-ի մարտին Վեհաժողովի կողմից վավերացված Պայմանագրի նախագիծը ներկայացվեց ԱՊԵԸ ԱԳ նախարարներին: Նրանցից ոմանք պնդում էին, որ անհրաժեշտ է նախ և առաջ կառուցել ԵՊԸ, որից հետո նոր ԵՔԸ: Մյուսները կարծում էին, որ պետք է գերակայի խորհրդարանական իշխանությունը և առաջարկում նոր նախագիծ, որով օրենսդիր իշխանությունը կբաժանվեր Գործադիր Խորհրդի և Ազգային նախարարների Խորհրդի միջև: Տե՛ս Linda Risso նշվ. աշխ., էջեր 202-222; Տե՛ս նաև <https://www.cvce.eu/en/education/unit-content/-/unit/02bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/6550430e-98c0-4441-8a60-ec7c001c357b> ; Catherine Gegout նշվ. աշխ., էջ 6; Federiga Bindi նշվ. աշխ., էջ 14; Karen E. Smith / European Union Foreign Policy in a Changing World, 2nd edition (Polity 2011), p. 30; Emmanuel Konde, Pierre Mendès նշվ. աշխ., էջեր 28-29:

¹³ Տեղին է, ի թիվս պատճառների, բացի ԵՊԸ վերաբերական բնույթը (այսինքն՝ անհասկանալի սպասումները վերաբերական նոր միության հզորությունից) հիշատակել նաև Գորեայում պատերազմի ավարտը, Յոսիֆ Ստալինի մահը, ինքնիշխանության և ազգային նույնականացման կորուստի վախը՝ Ֆրանսիայի համար, Գերմանիայի վերազինման սպառնալիքը և այլն: Տե՛ս Historical Sketch of the Great Debate in France Defeats E.D.C., (en collab. avec Daniel Lerner), New York, Praeger, 1957, English version of La Querelle De la CED (Armand Colin, Paris, 1957), pp. 3-8, 11-13.:

¹⁴ ԵՊԸ ձախողումից հետո օրակարգից դուրս մղված վերաբերական մոդելը իր հետագա զարգացումը ստացավ Եվրոպական Տնտեսական Ընկերակցության ու Եվրոատոմի շրջանակներում:

¹⁵ Համաձայնագրի կառուցվածքային տարրերն էին. Մաս I՝ Հիմնարար սկզբունքներ, գլուխ I. Եվրոպական պաշտպանական համայնքը (հոդվածներ 1-8), II գլուխ. Եվրոպական պաշտպանական ուժերը (Հոդվածներ 9-18); Մաս II՝ Համայնքի հաստատությունները, գլուխ I. Հանձնաժողովի խորհուրդ (հոդվածներ 19-32); Գլուխ II. Վեհաժողովը (հոդվածներ 33-38), III գլուխ. Խորհուրդը (հոդվածներ 39-50), գլխ. IV. Դատարան (Հոդված 51-67); Մաս III՝ Ռազմական դրույթներ. Գլուխ I. Եվրոպական պաշտպանական ուժերի կազմակերպում և կառավարում (հոդվածներ 68-79), գլուխ II. Եվրոպական պաշտպանական ուժերի կարգավիճակը (հոդվածներ 80-82); Մաս IV՝ Ֆինանսական դրույթներ (83-100 հոդվածներ).

¹² Տե՛ս <https://www.cvce.eu/en/education/unit-content/-/unit/02bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/6550430e-98c0-4441-8a60-ec7c001c357b> (12.02.2018 թ., ժամը 17:30) :

¹³ Վեհաժողովին միացել էին երեքական ներկայացուցիչ Ֆրանսիայից, Գերմանիայից և Իտալիայից: Տե՛ս Divided we stand: The French and Italian political parties and the rearmament of West Germany, 1949-1955, by Linda Risso (Cambridge Scholars Publishing 2007) p. 67.:

¹⁴ Տե՛ս <https://www.cvce.eu/en/education/unit-content/-/unit/02bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/6550430e-98c0-4441-8a60-ec7c001c357b> (15.02.2018 թ., ժամը 12:20) :

¹⁵ Այնուամենայնիվ, ԵՊԸ-ն, որպես տրանսատլանտյան դաշինքի ուժեղ եվրոպական բաղադրիչ և Գերմանիայի ներգրավման հարթակ, համարվում էր վճռորոշ՝ պաշտպանական ջանքեր ապահովելու համար, ու չէր կարող իրեն թույլ տալ լինելու միջկառավարական: Միջկառավարական մոդելի պարագայում կպահանջվեր ինքնիշխան գերմանական զինված ուժերի ստեղծում: Ենթադրյալ այլընտրանք էր՝ Գերմանիայի համար Եվրոպական, իսկ մնացած բոլորի համար ազգային պաշտպանությունը, որը սակայն խտրական էր Գերմանիայի վերաբերությամբ և հետևաբար անընդունելի: Այդ պատճառով էլ, վերաբերական մոտեցումը հիմնականն էր ԵՊԸ ծրագրի համար:

¹⁶ Այս ձախողումից հետո՝ տվյալ ժամանակահատվածում առավել նշանակալից իրադարձություն հանդիսացավ «Ֆուլշեյի պլանը», որը իր անվանումն էր ստացել Եվրոպական պետությունների Միության պլանը նախապատրաստող միջկառավարական հանձնաժողովը նախագահող Ֆրանսիացի դեսպանի շնորհիվ: Ի տարբերություն Եվրոպական Պաշտպանական Ընկերակցության

ինչպես նաև բազմաթիվ արձանագրություններից և այլ գործիքներից²¹:

ԵՊԸ վառ արտահայտված՝ բացառապես պաշտպանական բնույթն արտացոլված էր Պայմանագրի 2-րդ հոդվածի 1-ին մասում, որի բառացի մեկնաբանությունը նախատեսում էր՝ ԵՊԸ-ի զերծ մնալը ՄԱԿ առաքելություններից՝ ՄԱԿ կանոնադրության VI և VII գլուխների համատեքստին համապատասխան, օրինակ, Կորեայի պատերազմին միջամտելուց: Ընդ որում, Պայմանագրի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը սահմանում էին՝ 3-ը. «Եվրոպայում²² գտնվող որևէ անդամ պետության կամ Եվրոպական պաշտպանական ուժերի դեմ ցանկացած զինված հարձակում կդիտարկվի որպես հարձակում բոլոր անդամ պետությունների վրա:»; 4-ը. «Անդամ պետությունները և Եվրոպական պաշտպանական ուժերը ցուցաբերում են պետությանը կամ ուժին, որն ենթարկվել է այդպիսի հարձակման, իրենց իշխանության ներքո առկա ռազմական և այլ ցանկացած օգնություն^{23»}²⁴: Հասկանալի է, որ այսպիսով ԵՊԸ վերածվում է այնպիսի ռազմական դաշինքի, որը համադրելի էր ՆԱՏՕ-ին²⁵ կամ ԱԵՄ-ին²⁶:

Պայմանագրի 8-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված են Ընկերակցության մարմինները.

Մաս V՝ Տնտեսական դրույթներ (հոդվածներ 101-11); Մաս VI՝ Ընդհանուր դրույթներ (հոդվածներ 112-32): Տե՛ս <http://aei.pitt.edu/5201/1/5201.pdf> (26.02.2018 թ., ժամը 18:25):

²¹ Տե՛ս նաև 30. Martin Trybus / European Union law and Defence Integration (Hart publishing Oxford and Portland Oregon 2005), էջ 22:

²² «Եվրոպայում գտնվող» տերմինը պարզաբանում է, որ արտերկրում գտնվող անդամ երկրների տարածքները, որպիսիք են՝ Հոլանդական Անտիլները, Բելգիական Կոնգոն կամ Ֆրանսիական դեպարտամենտները Ալժիրում, դուրս էին Պայմանագրով նախատեսված պաշտպանությունից:

²³ «Ցանկացած այլ օգնություն» դրույթը վերաբերում է ոչ ռազմական օգնությանը, այդ թվում՝ քաղաքացիական աջակցությանը, դրամական միջոցներ տրամադրելուն, քաղաքացիական պաշտպանությանը, ինչպես նաև, հավանաբար, ազգային ռազմականացված միավորումներին, որոնք Եվրոպական պաշտպանական ուժերից ժամանակավոր կամ մշտապես դուրս էին գտնվում:

²⁴ Տե՛ս <http://aei.pitt.edu/5201/1/5201.pdf> (07.03.2018 թ., ժամը 12:45):

²⁵ Տե՛ս https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_17120.htm?selectedLocale=hy (07.03.2018 թ., ժամը 12:45) հոդված 5:

²⁶ Տե՛ս <http://www.weu.int/Treaty.htm> (07.03.2018 թ., ժամը 14:45) Article 5:

Լիազոր Հանձնաժողովը, Վեհաժողովը, Խորհուրդը և Դատարանը²⁷, իսկ 3-րդ հոդվածը հիմք էր նախապատրաստել ԵՊԸ բյուջե²⁸ մուտքագրվող ազգային ներդրումների համար:

Ինչ վերաբերում է Պայմանագրով նախատեսված Եվրոպական պաշտպանական ուժերին, ապա դրանց վերաբերյալ կարգավորումները սահմանվում էին 9-18-րդ հոդվածներով: Անդամ պետություններից միավորներ պետք է հատկացվեին Ընկերակցությանը՝ «նրանց միաձուլման նպատակով»: Ոչ մի անդամ պետություն ԵՊԸ պայմանագրից դուրս չէր կարող հավաքագրել կամ պահել ազգային զինված ուժեր, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված էին պայմանագրի հատուկ դրույթներով, իսկ նման հանգամանքները կարող էին կիրառվել միայն այն դեպքում, երբ անդամ պետությունը կատանձներ իր համար պարտավորություններ՝ ոչ Եվրոպական տարածքների պաշտպանության, ինչպես նաև միջազգային առաքելությունների իրականացման համար՝ Բեռլինում, Ավստրիայում կամ Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո²⁹: Պայմանագրի 15-րդ հոդվածը վերաբերում էր անձնակազմին, որը պետք է կազմված լիներ զորակոչիկներից կամ կանոնավոր մասնագիտացված կամավորականներից, որոնք պետք է կրեին նույնանման համազգեստ³⁰, իսկ ՆԱՏՕ-ի Գերագույն հրամանատարը լիազորված էր ապահովել՝ ԵՊԸ ուժերի կազմակերպված, հագեցված, վերապատրաստված և «բավա-

²⁷ Այս մարմինների մասին առավել մանրամասն կարգավորումներն տրված են Պայմանագրի 19-67-րդ հոդվածներում:

²⁸ Պայմանագրով Ընկերությանը վերապահված էր ընդհանուր բյուջե, որի հետ կապված կարգավորումները տրված են Պայմանագրի 86-96 հոդվածներում:

²⁹ Նշենք, որ Համաձայնագրի 12, 13, և 14-րդ հոդվածներով սահմանվում էին այն պայմանները, երբ անդամ պետությունը Հանձնաժողովի ղեկավարության արտոնմամբ կարող էր ժամանակավորապես ԵՊԸ ներդրված իր զինված ուժերը դուրս հանել՝ ներազգային անսպասելի հանգամանքներին դիմակայելու նպատակով:

³⁰ Մանրամասն կարգավորումները տրված են Պայմանագրի III (Ռազմական դրույթներ) մասում, որի գլուխ I. 68-79-րդ հոդվածներով սահմանվում էին Եվրոպական պաշտպանական ուժերի կազմակերպման և կառավարման ընթացակարգերը՝ ներառյալ ցամաքային, օդային և ծովային ուժերի էլեմենտների բազային կառուցվածքները:

րար» չափով³¹ պատրաստ լինելը, ծառայություն իրականացնելու համար: Առանցքային կարևորություն ունեւր Պայմանագրի 3-րդ մասի 2-րդ գլուխը, որը վերաբերում էր ԵՊԸ իրավական կարգավիճակին, նրա իրավունքներին ու պարտականություններին միջազգային իրավունքի և կոնվենցիաների վերաբերությամբ, ինչպէս նաև նրանց վարքագծին միջազգային հանրային իրավունքի հետ հարաբերություններում³²:

Անհրաժեշտ է հիշատակել ևս մեկ կարևոր գործոն՝ Միացյալ Թագավորության և ԵՊԸ պայմանագրի փոխհարաբերակցությունը: Նշենք, որ Միացյալ Թագավորությունը չէր հանդիսանում պայմանգիրը ստորագրած անդամ երկիր: Այնուամենայնիվ, Թագավորության կառավարությունը ստորագրել էր հուշագիր Միացյալ Թագավորության՝ ԵՊԸ-ին ասոցացման մասին, Միացյալ Թագավորության և ԵՊԸ միջև համագործակցության Համաձայնագիրը, ընդհանուր քաղաքականության վերաբերյալ հայտարարությունը՝ Միացյալ Թագավորության և ԵՊԸ Զինված Ուժերի ռազմական ասոցիացիայի մասին, և վերջապէս Հռչակագիր, որով կողմերը պարտավորվում էին շարունակել գորքերի տեղակայումը Եվրոպական մայրցամաքում, մասնավորապէս՝ Գերմանիայում: Ավելին, Թագավորության կառավարությունը հռչակեց, որ կդիտարկի ԵՊԸ անդամ ցանկացած պետության վրա ռազմական հարձակումը՝ որպէս հարձակում Միացյալ Թագավորության վրա, դրանով իսկ մասամբ իրեն մոտեցնելով ԵՊԸ-ին: Այնուամենայնիվ, Լոնդոնը չմիացավ Ընկերակցության վերաբերական կառույցներին, որպէս լիիրավ անդամ³³:

Ինչնիցե, Արևմտյան Եվրոպական Միությունը³⁴ (այսուհետ՝ ԱԵՄ), որը 1954 թ. Հոկտեմ-

բերին արտոնեց Արևմտյան Գերմանիային և Իտալիային միանալ Բրյուսելյան պայմանագրին³⁵ (այլ կերպ՝ Մոնիֆիկացված Բրյուսելի Պայմանագիր, այսուհետ՝ ՄԲՊ)³⁶, երբեք և չէր կարող փոխհատուցել ԵՊԸ և Եվրոպական ռազմական ինտեգրման ձախողումը³⁷: ԱԵՄ³⁸ կենտրոնական գրասենյակը տեղակայվել էր Լոնդոնում՝ հավասարակշռելով Փարիզում ՆԱՏՕ-ի և Բրյուսելում ԵԸ-ն տեղակայմանը: Որոշում կայացնող Բարձրագույն մարմինն էր՝ միջկառավարական Խորհուրդը, որտեղ նույնիսկ կամ հանկարծակի հանդիպում էին նախարարական մակարդակով, բայց սովորաբար դեսպանների մակարդակով մշտական ներկայացուցիչների միջոցով, ինչը շատ նման էր ՆԱՏՕ-ին: Այն ուներ անդամ երկրների ամենամյա ռոտացիոն հիմքով փոփոխվող նախագահություն՝ անգլերենի տառերի այբբենական հաջորդականության համապատասխան³⁹: Անդամ երկրների քաղաքացիներից կազմված փոքրաթիվ միջազգային աշխատակազմը ղեկավարում էր գլխավոր քարտուղարը, և այդ պաշտոնը 1955-1962թթ. Առաջինը զբաղեցրեց Լուի Գոֆինը: Մշտական ներկայացուցիչների մակարդակով հանդիպումների ժամանակ, ինչպէս և ՆԱՏՕ-ում, ԱԵՄ Խորհուրդը նախագահում էր Գլխավոր քարտուղարը: ԱԵՄ-ի կողմից առաջին անգամ ստեղծվել էր մեկ այլ կարևոր տարր՝ խորհրդարանական Վեհաժողովը, որին յուրաքանչ-

1954 թ. հոկտեմբերի 25-ի Փարիզի Համաձայնագրով (ուժի մեջ է մտել 05.05.1955թ.) որով փոփոխություններ և լրացումներ կատարվեցին 1948 թ. Բրյուսելյան Պակտում: Տե՛ս 211 UNTS 342. ԱԵՄ-ն գործեց 1948-2011թթ. և համախմբեց 28 անդամ – երկրների 4 տարբեր կարգավիճակով՝ անդամ երկրներ, ասոցացված երկրներ, դիտորդներ և ասոցացված գործընկերներ:

³⁵ Տե՛ս European Security in Transition / Edited by Gunther Hauser Austrian Defence Academy, and Franz Kernic University of Innsbruck, Austria, (ASHGATE 2006), p. 9:

³⁶ Նշենք, որ 1954 թ.-ի Փարիզի Համաձայնագրի ստորագրումից հետո Բրյուսելյան Պայմանագիրը վերանվանվեց Մոնիֆիկացված Բրյուսելյան Պայմանագրի (MBT), հասանելի աղբյուր՝ <http://aei.pitt.edu/32322/1/ep46.pdf> (22.03.2018թ.):

³⁷ Տե՛ս https://www.cvce.eu/en/education/unit-content/-/unit/02bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/33164_ecd-6067-4ecd-bd73-423ac8c112f5 (14.02.2018 թ., ժամը 17:00):

³⁸ Նշենք նաև, որ ԱԵՄ գործունեության աշխատանքային լեզուներ են հանդիսանում Անգլերենը և Ֆրանսերենը:

³⁹ Տե՛ս Death of an Institution / The end for Western European Union, a future for European defence? Alyson JK Baileys and Graham Messervy-Whiting (Egmont Paper 46, May 2011) p. 13:

³¹ Տե՛ս 02.06.1952թ., «ԵՊԸ մասին» Պայմանագրի հոդված 18: Հասանելի աղբյուր՝ <http://aei.pitt.edu/5201/1/5201.pdf> (07.03.2018 թ., ժամը 15:05):

³² Այսպէս՝ «ԵՊԸ մասին» Պայմանագրի 80-րդ հոդվածը սահմանում է. «Ընկերակցությունը պետք է ունենա Եվրոպական պաշտպանական ուժերի և նրանց անդամների նկատմամբ նույն իրավունքները և պարտականությունները, որը ունեն պետությունները, իրենց ազգային ուժերի և նրանց անդամների նկատմամբ, միջազգային իրավունքին համապատասխան»:

³³ Տե՛ս նաև Martin Trybus, նշվ. աշխ., էջ 42:

³⁴ Անհրաժեշտ է հիշատակել, որ Արևմտյան Միությունը վերափոխվեց Արևմտաեվրոպական Միության (ԱԵՄ)

յուր անդամ պետություն իր ազգային խորհրդարանի կազմից պատվիրակներ էր ուղարկում, բաղկացած այն նույն պատգամավորներից, որոնք առաջադրվել էին Եվրոպայի Խորհրդի կազմի համար⁴⁰:

Իրավական տեսանկյունից, Փարիզի I արձանագրությունը, որով վերանայվեց Բրյուսելյան Պայմանագիրը և Արևմտյան Միության անդամ պետությունների կազմը, իր 1-ին հոդվածով ամրագրեց, որ զինված ուժերի վերաբերյալ հաջորդիվ երեք արձանագրությունները հանդիսանում են փաստաթղթի բաղկացուցիչ կառուցվածքային մաս⁴¹, իսկ դրա նախաբանում առկա հակազերմանական⁴² դրույթը փոխարինվեց հետևյալով՝ «Եվրոպայի առաջադեմ ինտեգրումը խրախուսելու և միասնությունը խթանելու համար»⁴³: ՄԲՊ 4-րդ հոդվածն էլ կապակցում էր ԱԵՄ-ը ՆԱՏՕ-ին:

Պաշտպանական տեսանկյունից ՄԲՊ իր 5-րդ հոդվածով, լուծել էր սեփական ինքնապաշտպանության գործառույթը երկար տարիների համար «Մառը պատերազմի» դիմակայության ժամանակ⁴⁴, հաշվի առնելով, որ

⁴⁰ Տե՛ս նույն տեղում:

⁴¹ Չինված ուժերի վերաբերյալ Փարիզի II արձանագրությունը սահմանում էր օդային և ցամաքային ուժերի առավելագույն քանակը, որը կարող էին պահել անդամ պետություններից յուրաքանչյուրը: Այսքանով Միացյալ Թագավորությանը հորդորվում էր Եվրոպայում պահել որոշակի ուժեր՝ նախատեսելով դրանց հետագա դուրսբերումը, բացառությամբ արտակարգ իրավիճակների՝ այլ կողմերի մեծամասնության համաձայնության պայմանի պարագայում: III Արձանագրությունը վերաբերում էր սպառազինությունների վերահսկմանը, որով Գերմանիայի Դաշնությունը պարտավորություն էր ստանձնել չարտադրել ատոմային, քիմիական կամ կենսաբանական զինամթերք և սարքավորումներ (Գերմանիայի կողմից նմանօրինակ պարտավորության պահանջատեր էր Ֆրանսիան): Ավելին, բոլոր անդամ-պետությունները համաձայնեցին իրենց որոշ զինատեսակների պաշարների վերահսկման վերաբերյալ: Փարիզի IV արձանագրությամբ հիմնադրվեց ԱԵՄ Գործակալություն՝ Չինված ուժերի վերահսկողության համար: Տե՛ս Բրյուսելի Պայմանագիրը փոփոխող և լրացնող Արձանագրություններ ստորագրված 23.10.1954թ., 211 UNTS 342.:

⁴² Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ 1955թ.-ին Գերմանիային թույլատրվեց հիմնադրել սեփական զինված ուժեր, մինչ այժմ Բուլղարիայի մեծ մասը, ինչպես նաև Գերմանիայի պաշտպանության նախարարությունը գտնվում է Եվրոպայում ՆԱՏՕ-ի Բարձրագույն դաշնային ղեկավարման ներքո:

⁴³ Փարիզի I արձանագրության 2-րդ հոդված:

⁴⁴ Փարիզի արձանագրության 5-րդ հոդվածին և դրա հարաբերակցության ՆԱՏՕ պայմանագրի ու ԵՊԸ

նույն ժամանակահատվածում՝ 1955 թ.-ի մայիսի 5-ին, ի հակակշիռ վերազինվող Արևմտյան Գերմանիային և ստեղծված ՆԱՏՕ-ին, ձևավորվել էր Վարշավյան Համաձայնագրի Կազմակերպությունը (Վարշավյան Պակտը)⁴⁵, որը հանդիսացավ բևեռ հաջորդ 36 տարիների ընթացքում առկա երկբևեռ աշխարհաքաղաքական համակարգում:

Ի հակակշիռ ԵՊԸ-ին, ՄԲՊ-ը մարմնավորեց միջկառավարական մոդելը⁴⁶ և համաձայն իր VIII-րդ հոդվածի՝ անդամ – պետությունների արտաքին գործերի նախարարներից կազմված Խորհուրդը հանդիսացավ կենտրոնական մարմին, որը իրավագոր էր վերանայել Պայմանագրի իմպլեմենտացիայի հետ կապված բոլոր հարցերը⁴⁷: Նոր մշտական քարտուղարությունը ուներ առավելապես կառավարչական գործառույթներ, իսկ Վեհաժողովը, որը կազմված էր Եվրոպայի Խորհրդի Խորհրդատվական վեհաժողովում ԱԵՄ անդամ-պետությունների ներկայացուցիչներից, ընդունում էր ոչ պարտադիր բնույթի առաջարկություններ և փոխանցում կարծիքները Խորհրդին⁴⁸:

Գնահատելով նշված և ապագա ժամանակահատվածի անվտանգության կառուցակարգերի համար ՄԲՊ և ԵՊԸ պայմանագրերի ազդեցությունն ու նշանակությունը՝ դժվար է թերագնահատել դրանց կարևորությունը: Չանտեսելով ԵՊԸ Պայմանագրի բացասական⁴⁹ և դրական⁵⁰ կողմերը՝ պետք է փաս-

համանման հոդվածներին հեղինակի կողմից անդրադարձ է կատարվել աշխատության 5-րդ էջում:

⁴⁵ Տե՛ս A Chronology of European Security and Defence 1945-2005 / Julian Lindley-French, Katja Flückiger (Geneva, May 2005) էջ 50:

⁴⁶ Միջկառավարական մոդելը՝ որը սկիզբ էր առել դեռևս Դյունքերքի և Բրյուսելի պայմանագրերի շրջանակներում՝ գերակատեց ՄԲՊ և ի վերջո հանդիսացավ միասնական զինված ուժերի ձևավորման հիմնական ձևաչափ:

⁴⁷ Այլ կարգավորումների բացակայության պայմաններում, գերակշռում էր միաձայնության մոտեցումը: Տե՛ս <http://www.weu.int/> (The Brussels Treaty signed on 17 March 1948 was amended by the Paris Agreements signed on 23 October 1954) հոդված 8:

⁴⁸ Տե՛ս Macalister-Smith, entry on “Western European Union” in R. Bernhardt Encyclopedia of Public International Law (North Holland, Amsterdam, 1983), pp.368-369.

⁴⁹ Նշենք, որ առկա մի քանի համանման պայմանագրեր՝ կարգավորող գրեթե համանման շրջանակի հարցեր՝ ինչպես նաև ՆԱՏՕ-ն, որն իր մեջ ներառում էր ԱԵՄ անդամ – երկրների ինստիտուտները և ռազմական բոլոր

տենք, որ այն հանդիսացավ առաջադեմ ժամանակի համար⁵¹, և մինչ օրս վերջնականապես չստեղծվեց պաշտպանական բնագավառի համալիր կառուցակարգերով վերպետական բնույթի ուժեղ կազմավորում:

Կարելի է վիճարկել նաև ՄԲՊ⁵² կնքման նպատակահարմարությունը, հաշվի առնելով, որ նրանում արտացոլված հիմնական էլեմենտները՝ Գերմանիայի վերազինում, զինամթերքի վերահսկում, Եվրոպա մայրցամաքում Միացյալ Թագավորության ռազմական ներկայության ապահովում, ռազմական արդյունաբերության քաղաքականության իրագործում և այլ, լիովին ընդգրկվում էին ՆԱՏՕ-ի գործունեության շրջանակների մեջ: Սակայն, ԵՊԸ ձախողումից ստեղծված, բուն Եվրոպական անվտանգության երաշխիքի վակումը՝ կարիք ուներ լրացվելու:

Իհարկե, ժամանակը ապացուցեց, որ մեր իրականությունում սպառնալիքներն ու մտահոգությունները բազմաբնույթ են⁵³, ակնհայտ է նաև, որ այսօր ևս, որոշ խնդիրներ իրենց մտահոգեցնող մոտեցմամբ և նույնությամբ արդիական են⁵⁴: Առկա է նաև առժեհամակարգերի տարամիտում և վերախմաստավորում⁵⁵ Եվրոպական ընտանիքում:

Այս համատեքստում, հարկ էմ համարում ընդգծել, որ դեռևս անցած դարի կեսերին ստեղծված վերպետական պաշտպանական

պայմանգիրը՝ իր բովանդակությամբ և գործառնությամբ, կարող է ծառայել որպես էտալոն Եվրոպական մայրցամաքում ընդհանուր պաշտպանության և անվտանգության ձևավորման ու իրականացման համար: Վերպետականությունը, որ ժամանակին հանդիսացավ ԵՊԸ ձախողման հիմնական պատճառներից մեկը՝ ժամանակակից գլոբալ աշխարհակարգում՝ արդեն իսկ վերածվել է ընդունելի իրողության⁵⁶: Այդ է պատճառներից մեկը, որ կրկին ազդակ է հանդիսացել ընդհանուր Եվրոպական պաշտպանական համակարգի ձևավորման ուղղությամբ⁵⁷:

Օգտագործված գրականության ցանկ

1. Foreign and Security Policy in the European Union Edited by Kjell A. Eliassen (SAGE Publications London 1998), 247 էջ :
2. The Foreign Policy of the European Union: Assessing Europe's Role in the World / eds. Federiga Bindi (Brooking Institution Press 2010), 374 էջ :
3. Karen E. Smith / European Union Foreign Policy in a Changing World, 2nd edition (Polity 2011), 331 էջ :
4. European Security in Transition / Edited by Gunther Hauser Austrian Defence Academy, and Franz Kernic University of Innsbruck, Austria, (ASHGATE 2006), 218 էջ :
5. Catherine Gegout / European Foreign and Security Policy, States, Power, Institutions, and American Hegemony (University of Toronto Press 2010), 267 էջ :
6. Martin Trybus / European Union law and Defence Integration (Hart publishing Oxford and Portland Oregon 2005), 422 էջ :
7. Panos Koutrakos / Trade, Foreign Policy and Defence in EU Constitutional Law (Hart publishing Oxford and Portland 2001), 245 էջ :
8. Historical Sketch of the Great Debate in France Defeats E.D.C., (en collab. avec Daniel Lerner), New York, Praeger, 1957, English version of La Querelle De la CED (Armand Colin, Paris, 1957), p. 2-21. of 225 էջ -ից .:
9. Death of an Institution / The end for Western European Union, a future for European defence? Alyson JK Bailesand and Graham Messervy-Whiting (Egmont Paper 46, May 2011) 83 էջ .:
10. Macalister-Smith, entry on "Western European Union" in R. Bernardt Encyclopedia of Public International Law (North Holland, Amsterdam, 1983) 343 էջ .:

կառույցները՝ իրապես դարձնում էին ավելորդ նոր Պայմանագրի կնքումը:

⁵⁰ Այլևս իրողություն է, որ ներառվելով դաշինքի մեջ Գերմանիան վտանգ չէր ներկայացնում ռազմական առումով:

⁵¹ ԵՊԸ հանդիսացավ եզակի նախադեպ, որը նախատեսում էր վերպետական պաշտպանական միության ձևավորում, և ընդգրկում էր համապատասխան ինստիտուցիոնալ, ռազմական ընթացակարգեր ու նախատեսում գնումների իրականացման և ֆինանսների հավաքագրման մեխանիզմներ:

⁵² Տե՛ս www.weu.int

⁵³ Դրանց շարքում հիշատակենք միջազգային ահաբեկչությունը, գույնավոր հեղափոխությունները, կիբեռհանցավորության սպառնալիքը, տարերային աղետները, համաճարակները, մոլորակի գլոբալ տաքացումը և այլ համամարդկային սպառնալիքներ:

⁵⁴ Օրինակ, մերձբալթյան երկրների, Լեհաստանի, Միացյալ Թագավորության համար՝ արդեն իսկ Խորհրդային վտանգը վերափոխվել է Ռուսականի:

⁵⁵ Տեղին է հիշատակել Brexit-ով Միացյալ Թագավորության անջատումը Եվրոպական ընտանիքից, Կատալոնիայի, Շոտլանդիայի ինքնորոշման և անկախացման հանրաքվեների անցկացումը և այլ:

⁵⁶ Օրինակ, Եվրոպական Միությունը կամ տնտեսական ասպեկտով ԵԱՏՄ-ն:

⁵⁷ Տե՛ս <http://www.federicamogherini.net/historic-day-pesco/?lang=en>, Տե՛ս նաև՝ https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/35285/eu-strengthen-cooperation-security-and-defence_en (04.04.2018թ. ժ. 15:00) :

11. Divided we stand: The French and Italian political parties and the rearmament of West Germany, 1949-1955, by Linda Risso (Cambridge Scholars Publishing 2007) 289 էջ :
12. A Chronology of European Security and Defence 1945-2005 / Julian Lindley-French, Katja Flückiger (Geneva, May 2005) 284 էջ :
13. Legal competition on different levels: Supranationalism or Intergovernmentalism? Khudoyan G. M. (Регион и мир, 2018, № 1,) pp. 97-102.
14. Emmanuel Konde, Pierre Mendès France, French Security Politics, and the European Defense Community (Open Journal of Political Science 2013. Vol.3, No.1,) pp. 24-29:
15. https://www.cvce.eu/content/publication/1997/10/13/4a3f4499-daf1-44c1-b313-212b31cad878/publishable_en.pdf:
16. http://europa.eu/ecsc/results/index_en.htm:
17. https://www.cvce.eu/content/publication/1997/10/13/11a21305-941e-49d7-a171-ed5be548cd58/publishable_en.pdf:
18. <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=LEGISSUM%3Axy0023>:
19. https://europa.eu/european-union/sites/europa.eu/files/docs/body/treaty_on_european_union_en.pdf:
20. https://en.wikipedia.org/wiki/Robert_Schuman:
21. https://en.wikipedia.org/wiki/Schuman_Declaration:
22. <http://www.federicamogherini.net/historic-day-pesco/?lang=en>:
23. https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/35285/eu-strengthens-cooperation-security-and-defence_en:
24. <http://www.rumvi.com/products/ebook/%D0%B5%D0%B2%D1%80%D0%BE%D0%BF%D0%B5%D0%B9%D1%81%D0%BA%D0%BE%D0%B5-%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%BE/bce2bf61-1df7-4bc2-8963-568a00ba68a8/preview/preview.html>
25. <http://www.weu.int/>
26. 211 UNTS 342
27. <https://www.cvce.eu/en/education/unit-content/-/unit/02bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/6550430e-98c0-4441-8a60-ec7c001c357b> (12.02.2018 թ., ժամը 17: 30):
28. <https://www.cvce.eu/en/education/unit-content/-/unit/02bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/7da094ef-0718-4bba-b54a-4e218856f4cb> (13.02.2018 թ., ժամը 11: 10):
29. <https://www.britannica.com/topic/European-Defense-Community> (22.02.2018 թ., ժամը 11:20):
30. <https://www.britannica.com/biography/Rene-Pleven#ref73203> (22.02.2018 թ., ժամը 11:22):
31. <http://aei.pitt.edu/5201/1/5201.pdf> (26.02.2018 թ., ժամը 18: 25):
32. <http://www.weu.int/Treaty.htm> (07.03.2018 թ., ժամը 14: 45):
33. https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_17120.htm?selectedLocale=hy (07.03.2018 թ., ժամը 12: 45):
34. <http://aei.pitt.edu/32322/1/ep46.pdf> (22.03.2018թ.):